

13093



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Ջակոբ Սիմիոյան  
«28» 11 2024թ.



## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 253 - 24

Նախաձեռնող՝

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

Գեղարքունիքի մարզ, Նորափոս բնակավայր, Սարալանջ փողոց, 1 նրբ. 1 փուն

Գործունեությունը՝

Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի  
միջնակարգ դպրոցի կառուցում  
Այրում բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 253 - 24

« 28 » հոկտեմբեր 2024թ.

**Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ  
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն  
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա  
Տեղադրման վայրը՝ Տավուշի մարզ, Նոյեմբերյան համայնք, Այրում բնակավայր

**Ներածական մաս.** «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Այրում բնակավայրի Ա. Աբովյան 15 հասցեում միջնակարգ դպրոցի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. օգոստոսի 5-ի N 440 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 2.5 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության տարածքն իրենից ներկայացնում է պարզ երկրաչափական հորինվածքով բարդ ռելիեֆով հողատարածք, որտեղ առկա է 94 քմ մակերեսով քանդման ենթակա կիսաքանդ շինություն: Տարածքը գտնվում է շենք-շինություններից ավելի քան 35 մ հեռավորության վրա:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածքում ստորգետնյա ջրերը մինչև 15 մետր խորությամբ չեն բացահայտվել: Համաձայն ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանք տեղադրված են 15.0 մետրից խորը հորիզոններում:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝



- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 21775 քմ, որից
- նոր կառուցվող դպրոցի մակերեսը՝ 1518.0 քմ,
- նոր կառուցվող կաթսայատան մակերեսը՝ 36.0 քմ,
- կառուցապատված մակերեսը՝ 1700 քմ,
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 12500 քմ,
- անջրանցիկ մակերեսը՝ 6028.0 քմ:

Համաձայն նախագծի՝ դպրոցն իրենից ներկայացնում է սեյսմիկ կարող բաժանված երկու հավասար մասնաշենք՝ 432 աշակերտի համար նախատեսված: Առաջին հարկում նախատեսված են 1-ից մինչև 5-րդ դասարանների դասասենյակներ, նախադպրոցական դասարան, գրադարան, համակարգչային տեխնիկայի, ռազմագիտության, աշխատանքի ուսուցման և բժշկի սենյակ, ուսուցչանոց-մեթոդ կաբինետ, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներ, սպորտդահլիճ՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարան և խոհանոց, ինչպես նաև 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Երկրորդ հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների դասասենյակներ, 2 լեզվի սենյակ, ռեսուրսային կենտրոն, ուսուցչանոց-մեթոդ կաբինետ, կենսաբանության, քիմիայի և ֆիզիկայի մասնագիտացված լսարան՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճ՝ իրեն սպասարկող սենյակներ, 4 սանհանգուց և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ: Նախագծով առաջին և երկրորդ հարկերում նախատեսված են հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սանհանգուց և այլ միջոցառումներ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար՝ համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի:

Դպրոցի ստորգետնյա հարկերը ծառայելու են որպես ժամանակավոր թաքստոց: Թաքստոցն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, սանհանգուցով, լվացարանով: Ստորգետնյա հատվածում թաքստոցի համար նախատեսվում է վթարային ելք:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ՝ ֆուտբոլի ու բասկետբոլ-վոլեյբոլի համար:

Դպրոցի տանիքի թեքությունը կազմում է 7 աստիճան: Տանիքի հարավ նայող լանջին նախատեսվում է տեղադրել 44,46 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 78 հատ 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներ:

Նոր դպրոցը կառուցվելու է գործող դպրոցի տարածքում, որտեղ առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները: Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միանալու են համայնքային ցանցերին՝ համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի: Դպրոցի կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռացվելու են գոյություն ունեցող քաղաքային կոյուղու ցանց:

Ջեռուցումն իրականացվելու է կաթսայատան միջոցով: Կառուցվելու է նոր կաթսայատուն, տեղադրվելու է 650կ վտ արտադրողականության 2 կաթսա: Կաթսայատան գազամատակարարումը կիրականացվի համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Դպրոցի էլեկտրամատակարարումը և էլեկտրաէներգիայի հաշվառումը կիրականացվի դարձափոխիչային էլեկտրոնային երկսակագնային էլեկտրական հաշվիչի միջոցով՝ եռաֆազ սնուցմամբ: «ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ն դիմել է «Տարածքային էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տեխնիկական պայման ստանալու նպատակով:



Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքները տևելու են 20 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կոունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են տակդիրների կամ բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ, մետաղական կառուցվածքներ, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (115 մարդ), ինչը կազմում է 1920,75 մ<sup>3</sup>/շին.ժամ: Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 304.87 մ<sup>3</sup>: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2225.62 մ<sup>3</sup>/շին.ժամ:

Շինարարության ընթացքում խմելու անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից, իսկ ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոոգիստեռնով: Ջուրը լցվելու է տարածքում տեղադրվող 5տ տարողությամբ բաքի մեջ:

Դպրոցի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 2672 մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից հետլիցքը կազմելու է 1852 մ<sup>3</sup>: Հանվող բուսահողի ծավալը կկազմի մոտ 1246.2 մ<sup>3</sup>, որը կօգտագործվի կանաչապատման աշխատանքների համար: Բուսահողի հանման, պահման և հետագա օգտագործման աշխատանքները կիրականացվեն Կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի թիվ N 1404 որոշման պահանջներին համաձայն:

Գործունեության ընթացքում քանդման աշխատանքները իրականացվելու են մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի օգնությամբ կհեռացվեն պատերը, շինության տանիքը ամբողջովին քանդված է: Քանդման աշխատանքներից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 282 մ<sup>3</sup>: Վերջիններիս, ինչպես նաև ավելացած հողային հանույթի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Նոյեմբերյանի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը շինարարության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 23760 կգ/տ, կտեղափոխվի լիցենզավորված ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Կանաչապատումն իրականացվելու է տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով՝ համաձայն Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծի: Կանաչապատ տարածքի որոշումը



կատարվելու է գոյություն ունեցող ոռոգման ցանցից՝ պոլիպրոպիլենե խողովակներով, կաթիլային եղանակով՝ բուսականության աճը և կաչողականությունն ապահովելու նպատակով: Կանաչապատման նպատակով օգտագործվող 1246.2 մ<sup>2</sup> ծավալով բուսահողը չբավարարելու դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով, ձեռք կբերվի անհրաժեշտ ծավալի բուսահող:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման հետ:

Դպրոցի կառուցման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղղված մոնիտորինգ , մասնավորապես՝

- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- տեխնիկական վերահսկողության իրականացում և հայտնաբերված անհամապատասխանությունների մասին իրազեկում,
- շինարարական տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շինարարական հրապարակում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կաչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

**Պատճառաբանական եզրահանգումներ.** Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Տավուշի մարզի Այրում բնակավայրի միջնակարգ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության,



մշակույթի և սպորտի նախարարությունները, Տավուշի մարզպետարանը, Նոյեմբերյանի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրամշակում, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Տավուշի մարզի Այրում բնակավայրում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

### Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ՝ բնապահպանական կառավարման պլանով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Թափոնների մասին» օրենքների պահանջները, ինչպես նաև նախատեսվող գործունեությանն առնչվող շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված բոլոր նորմատիվաիրավական ակտերի պահանջներին:

-Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

### ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ՀԱԼԴԻ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Ռուզան Մակինյան